

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ


Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում.
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:


Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2020 թվականի մայիսին դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Մայիսի 18-ից 31-ն ընկած ժամանակահատվածում մայիսի 1-ից 17-ի համեմատությամբ Երևան քաղաքում փոշու պարունակությունը աճել է մոտ 3%-ով, Ալավերդում՝ 27%-ով և Ծաղկաձորում՝ 38%-ով: Գյումրում փոշու պարունակությունը նվազել է մոտ 27%-ով, Հրազդանում՝ 24%-ով, Վանաձոր և Արարատ քաղաքներում համապատասխանաբար՝ 1%-ով և 2%: Մայիսին Վանաձոր, Ալավերդի և Արարատ քաղաքներում դիտվել է փոշու միջին ամսական կոնցենտրացիայի գերազանցում համապատասխան ՄԹԿ-ից: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



Մայիսի 18-ից 31-ն ընկած ժամանակահատվածում մայիսի 1-ից 17-ի համեմատությամբ Երևանում ազոտի երկօքսիդի պարունակությունը աճել է մոտ 3%-ով, Գյումրում՝ 6%-ով, Վանաձորում՝ 20%-ով, Ալավերդում՝ 29%-ով, Հրազդանում՝ 9%-ով, Արարատում՝ 20%-ով,

Կապանում՝ 7%-ով: Ծաղկաձոր քաղաքում ազոտի երկօքսիդի պարունակությունը իջել է 17%-ով: Քաջարանում նշված ժամանակահատվածներում ազոտի երկօքսիդի պարունակությունը չի փոփոխվել: Վերոնշյալ քաղաքներում ազոտի երկօքսիդի մայիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:



Մայիսի 18-ից 31-ն ընկած ժամանակահատվածում մայիսի 1-ից 17-ի համեմատությամբ ծծմբի երկօքսիդի պարունակությունը Երևան քաղաքում աճել է մոտ 27%-ով, Վանաձորում՝ 14%-ով, Ալավերդում՝ 29%-ով, Ծաղկաձորում և Հրազդանում՝ 7%-ով, Կապանում՝ 35%-ով, Քաջարանում՝ 11%-ով: Գյումրում ծծմբի երկօքսիդի պարունակությունը նշված ժամանակահատվածներում չի փոփոխվել, իսկ Արարատում՝ նվազել է 19%-ով: Վերոնշյալ քաղաքներում ծծմբի երկօքսիդի մայիսի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

